Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

617.7
M-35

3374

1288

Ш 344

2002

2010

378
617.7
Ռ-39

ԻՆՉՊԷՍ ՊԱՀՊԱՆԵԼ

ԵՒ ԲԺՇԿԵԼ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՉՔԵՐԸ

ԱՌԱՒԵԼԱՊԷՍ

ԾԱՐԱՒԱՅԻՆ ԲՈՐԲՈՔՈՒՄԻՑ

(ՀԱՄԱՄԱՏԶԵԼԻ ԳՐՈՒԱԾ)

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՌԷՅԽԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻ ԱԿՆԱԲՈՒԹԻՒ

1008
35-234

թարգմանութիւն

ԲԺԻՇԿ Գ. ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

3 ԴԵԿ 98

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՅԻԹ — 1880

16582

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ղորաժիններեր եւ դեռահաս երեխաներեր վերայ բոլոր հոգատարներին:

Զարգացած մարդիկներին ընդհանրապէս:

Ծնողներին:

Դայեակներին:

Ֆէլդշերներին:

ԱՋԳ.

Կայսերական Կովկասեան բժշկական ժողովը, անցեալ Թ. հոկտեմբերի 16 նիստում կարգադրեց տպագրել ռուսերէն գրած տեարակս 1200 օրինակ եւ Թողնել վաճառելու:

Գրքոյկիս հայերէն եւ վրացերէն լեզուներով տպագրելու հարցը այդ նիստում բոլորովին վճռուած չէր:

Ահա որպիսի բառերով ես զիմեցի ժողովին սեպտեմբերի 16 նիստում:

«Կայսերական Կովկասեան բժշկական ժողովին վճռահատութեանը առաջարկուած գրքոյկս գրուած է նորածինների աչքերի շարաւային բորբոքման այն դէպքերի տպաւորութեան միջոցին, որոնք մինչեւ ինձ շատ ուշ էին հասնում, երբ մի կամ երկու աչքում եւս արդէն կարողացել էր եղջերիկը (роговица) վնասուել: Տխուր դէպքերը յիշողութեան մէջ դիւրին են մնում եւ երկար, քան Թէ ուրախալի եւ յաջողակ:

Ես կարծեցի որ իմ այս գրած գրքոյկս ոչ Թէ կարող է լինել, այլեւ կլինի օգտակար Թէեւ Թուով սակաւ երեխաների համար, որոնց բժիշկը որ եւ իցէ պատճառով չի տեսել: Գրքոյկիս հայերէն եւ վրացերէն լեզուներով տպագրութիւնը Կովկասի համար ես արդիւնաբեր եմ համարում:

Ես չգիտեմ քանիսը կկարդան գրքոյկս, միայն գիտեմ որ ամենախեղճերը չեն կարդալ, կամ կարդալ չիմանալով եւ կամ դէպք կամ միջոցներ չունենալով գրքոյկս առնելու համար: Եւ նոցա համար չէ գրուած գրքոյկս, նոցա համար լեզուն եւս հասարակ չէ, (Թէպէտ ես աշխատեցի պարզ արտայտել, ոչՊէ իւրաքանչիւր զարգացած մարդու համար, այլեւ ամենի համար, որոնք փոքր ի շատէ կարդալ գիտեն եւ կարդացածը հասկանում են) նոցա համար գրքոյկս շատ երկար է: Աւելի հասարակ լեզուով Կովկասում գրել, ոչ որի համար է:

Բայց կարող են կարդալ եւ յարմարացնել կարդացածը — զարգացած շատ մարդիկներ, հոգատար ծնողներ, լաւ դայեակներ, հանձարեղ ՔՀոյդշերներ, եւ դոցա վերայ կարելի է յուսալ որ փոքր առ փոքր օգտաւէտ տեղեկութիւնները կարծարծեն չքաւորների մէջ:

ԵՊէ գրքոյկիս օգնականութեամբ չեն կուրանալ մինչեւ անգամ 10 երեխայ, բոլոր աշխատութիւնները գրելու համար եւ ծախսերը տպագրութեան համար բոլորովին կգնահատուին:

18 հոկտեմբերի 1879 ամ.

Ր. Ժղկապէտ Մ. Ուէյտ.

Գրադարան Ընթերցարան
Հայ Կանանց
Մոսկվա
Մարիա Թադէոսեանի անուան

Մանկութեան առաջին շրջանը մեզ համար աննկատելի կերպով է անցնում. մենք մտնում ենք վառվռուն և բազմապահանջ կեանքի մէջ և ահա նոյն իսկ այս տեղ շատ անգամ այս կամ այն անսպասելի հանգամանքը մեզ ստիպում է մտածել անցած մանկութեան այն զանցառութիւնների և պակասութիւնների վերայ՝ որոնք այն ժամանակ կարող էին շատ դիւրութեամբ հեռացուել: Մեզ սովորեցուցած կամ դաստիարակած և կամ բժշկած չեն. աչքերը այլ եւս ծանր աշխատանքներ չեն գործում՝ մինչև անգամ մի որ և իցէ արհեստ ոսվորելու կամ դպրոցական և համալսարանական պարապմունքների ժամանակ և ն. ժամանակը կորած է, գործը անուղղելի է: Մենք կատարեալ իրաւունք ունինք մեղադրել մեր ծնողներին որոնք խոհուն լինելով, կարող էին հոգալ մեր մասին և չեն հոգացել. մենք ցաւում ենք մեր ծնողների կամ դաստիարակների անուղղելի սխալմունքների վերայ, եԹէ նոքա Թերի տեղեկութիւններ ունենալով հնար չեն ունեցել մեզ բաւականաչափ պատրաստելու այն կեանքի համար, որին ուղղել է մեզ մեր միջոցները, կոչումը, ստացած դաստիարակութիւնը, սիրելի պարապմունքը:

Դուք, ծնողներ, պարտական էք և պիտի մտածէք որ ձեր որդիքը ձեր անհոգութեան մասին, ձեզ մեղադրելու իրաւունք և տեղիք չունենան: Մենք, բժիշկներս, պարտական ենք մեր կարողութեան չափ յիշեցնել և սովորեցնել հիւանդութիւնից տակաւին ազատ եղողներին, Թէ ինչքան կարեւոր է երեխաների մարմնի և հոգւոյ առողջութեան վերայ հսկել. հոգւով և մարմնով զարգացած երեխաները կօրհնեն իրանց ծնողներին նոցա դժուար հոգատարութիւնը մտաբերելով:

Աչքացաւի տանջանքներին ծանօԹը, կամ կոյր զաւակ և աղքական ունեցող անբաղդը կարող է կատարելապէս հասկանալ այս գրքոյկի նշանակութիւնը և անկեղծ նպատակը: Իսկ այդ ցաւերին ծանօԹութիւն չունեցող բաղդաւորը, Թող կարդայ որ մարդավայել

հոգատարութեամբ կարողանայ երեխաների աչքերը պահպանել այդ տաժանելի ցաւերից և անբաղդութեան միջոցին աչքերի հետ վարուել այնպէս, ինչպէս սովորեցնում է լուսաւոր և անաչառ գիտութիւնը և ոչ թէ ժողովրդական ձայնը կամ բարի բայց տգէտ տատը, շահասէր կախարդը կամ խաբեբան և վատ մանկաբարձը։ *)

Ձագիւ թէ երեխան լոյս աշխարհ է մտնում, նա արդէն իւր հետ աշխարհ բերած ամենաթանկագին իրը—աչքը կորցնելու վտանգի մէջ է։ Նորածինին սպառնող հիւանդութիւնը, որ աւելի սարսափելի է տգիտութեան հանգամանքներում, նորածինների ակէների շարաւային բորբոքումն է**)։ Այդ մասին ահա, սիրելի ընթերցող, կամենում եմ խօսել քեզ հետ, միևնոյն ժամանակ պիտի չմոռանամ յիշատակութիւն անելու այն հիւանդութիւնների և ֆնասակար աղդեցութիւնների մասին, որոնք ամբողջ կեանքի ընթացքում մինչև խորին ծերութիւն թողնում են իրանց հետքերը աչքերի մէջ։

Նայեցէք կոյր աղքատներին, մանաւանդ երեխաներին։ Այդ թշուառները մեծ մասամբ կուրացած են նորածինների աչքերի շարաւային բորբոքումից և նոցանից շատերը անշուշտ որ կարող էին լոյս աշխարհը տեսնել, եթէ իրանց մայրերի և կախարդների տգիտութեանը զոհ եղած չլինէին։

Աչքերի շարաւային բորբոքումից առաջացած կոյրերի թիւը մեր կարծածից աւելի շատ է, միայն թէ մենք այնպիսիներին շուտ շուտ չենք պատահում։

Նայեցէ՛ք զանազան տէրութիւնների ապաստանարանների վերայ, ուր դաստիարակւում և սովորում են անբաղդ կոյրերը և դուք կդտնէք որ կուրացած երեխաներից շատերը, իրանց տեսողութիւնը

*) Ինձ յայտնի են քանի մի դէպքեր, երբ մանկաբարձները հաւատացնում էին ծնողներին թէ, աչքերը հարկաւոր չէ բժշկել, թէ նորածինների աչքերի ամեն մի հիւանդութիւնը, իսկապէս հիւանդութիւն չէ, այլ տեսակ մի «ծաղիկ» է, իբր երեխաները «ծաղկում» են, երեխաներին չէին բժշկում և նոքա կուրանում էին։

(**) Շարաւային բորբոքումն—гнойное воспаленіе, гной—շարաւ, թարախ, բիժ, ժահր։

ծնուելուց անմիջապէս փոքր ինչ յետոյ են կորցրած։ Ահա այսպիսով կուրացածների տոկոսիքը առ հարիւր կոյր երեխաներն.

Բերլին քաղաքի կուրանոցներում . . .	21
Բրէսլավլ	35
Հանովէր	23
Կէօնիգսբէրդ	28
Միւնխէն	43
Լէյպցիգ	50

Կոյրերի ուսուցիչների եվրոպական երկրորդ ժողովում, բացատրուեցան, որ բոլոր կոյր երեխաների երրորդից մինչև կէս մասը կուրացած են նորածինների աչքերի բորբոքման պատճառով։

Բերլինի բժիշկ Գիրշբերգի հաշուից երևումէ որ, Բերլինում իւրաքանչիւր 100 բոլորովին կուրացածներից 16ը կուրացել են նորածինների աչքերի շարաւային բորբոքումից, 9ը ծաղկի բորբոքումից և 7ը աչքի արտաքին այլ հիւանդութիւններից։

Բժիշկ Բրիմերը նմանապէս գտաւ որ Կիլ քաղաքում 100 բոլորովին կուրերից 10ից աւելին կորցնում են իրանց տեսութիւնը նախկին մանկութեան մէջ նորածինների աչքի շարաւային բորբոքումից։

Բայց որքան մարդիկ կան թոյլ տեսողութեամբ կամ որքան կիսակոյրեր կան որոնք իրանց բոլոր կեանքի մէջ տանջւում են իրանց մանկութեան առաջին օրերից աչքերի այդ շարաւային բորբոքումն ունենալու պատճառով—այդ դեռ ոչ ոք չէ հաշուել և անկասկածելի է որ, այնպիսի մարդկանց թիւը չափազանց մեծ է։

Այդպիսի ճիշդ տեղեկութիւն տալ Թիֆլիզի բնակիչների մասին ուր իմ գործունէութիւնս է կատարւում, բոլորովին անկարելի է, բայց որքան կարելի է դատել ինձ մօտ թէ տուն ու թէ բժշկանոց եկող հիւանդներից, երևումէ որ ծնուելուց յետոյ շուտով կուրացածների և կամ տեսողութեան արատաւորութիւն ստացողների թիւը շատ սակաւ չէ։ Միևնոյն ժամանակ պէտք է յիշել որ բժշկին դիմում է Տփխիսու աղքատ ժողովրդի ամենաչնչին մասը, նմանապէս շատերը բժշկւում և կուրանում են կախարդների մօտ և վերջապէս շատերը հիւանդանում են և առողջանում կամ կուրանումեն առանց որ և իցէ հոգատարութեան, տգիտութեան և աղ-

քատութեան մէջ։ Ես հաւատացած եմ որ զրբոյկս կարդացողներից շատերը կ՚իշեն թէ ինչպէս իրանց երեխաների աչքերը ցաւելիս են եղել, թէ ինչպէս ցաւը մի երեխայից միւս երեխային է փոխուել և պիտի ցաւեն որ իր ժամանակին չեն դիմել բժշկի օգնութեան։

Առաջ բերած օրինակներն աւելի ցաւալի են նորա համար, որ այդ հիւանդութիւնը, որի մասին ես խօսումեմ, այսինքն աչքերի շարաւային բորբոքման առաջն կարելի է շատ անգամ առնել և համարեա թէ միշտ բժշկել նորան, նաև չթողուլ որ երեխայի տեսողութիւնը խանգարուի։ իսկ աչքերի միւս տեսակ հիւանդութիւնները շատ անգամ դիւրութեամբ են բժշկւում և առաջն առնւում։

Դժբաղդաբար շատ և շատ անգամ պատահումէ մեզ տեսնել բոլորովին աննպատակ վարմունք հիւանդացած աչքերի հետ, ինչպէս ընտանիքներում, գործ են դնում բոլորովին այլ և այլ անօգուտ և վնասակար միջոցներ։ և երբեմն կուրօրէն հաւատալով նոցա բուժիչ զօրութեանը։

Եւ այդ մենք տեսնումենք ոչ թէ միայն չզարդացած աղքատների ընտանիքներում այլ և շատ անգամ ուր հարստութիւն և բաւականութիւն են գտանւում, որոնք չեն կարողանում ազատել կոպիտ տգիտութիւնից և աննկատելի կերպով ցանումեն աստ և անդ իրանց սերմերը։ Նորածինների աչքերի շարաւային բորբոքումն լինումէ ոչ թէ միայն աղքատութեան և խեղճութեան մէջ, այլ հարստութիւնը անգամ, մաքրութիւնն և լաւ կեցութիւնը շատ անգամ չեն ազատում այդ հիւանդութիւնից։

Նախ և առաջ քննենք երեխայի աչքը, որքան մեզ հարկաւոր է այդ հիւանդութեան նկարագրութիւնը բաւականաչափ հասկանալու համար և յետոյ խօսենք աչքի այդ հիւանդութիւնից պահպանողութեան միջոցների մասին։

Մարդկային աչքը ուշադրութեամբ քննողը, կնկատէ չափազանց նուրբ կարմիր գծեր — երակներ, (որոնց միջով է հոսում աչքերի արտաքին մասերի արիւնը) աչքերի այն մասերի վերայ որն որ սովորաբար ճերմակ կամ փոքր ինչ կապտագոյն է լինում և որ ասւումէ կարծրաթաղանթ (ОБЛОКЪ)—Եթէ աւելի ուշադրութեամբ

վերայից փոքր ինչ կամաց սղմենք մատով աւելի խոշոր երակների վերայ, այն ժամանակ շուտով կհամոզուենք որ նոցա միջից կարելի է, թէպէտ կարճ ժամանակում, արիւնը դուրս սեղմել և նմանապէս կհամոզուինք որ, այդ երակները կարելի է մի տեղից միւսը տեղափոխել։ Եւ վերջապէս եթէ փոքրիկ ունելիքներով բռնենք քանի մի այդպիսի երակներ, կտեսնենք որ, դոցա կարելի է փոքր ինչ անջատել, բարձրացնել աչքի կարծրաթաղանթից։ Մի ևնոյն ժամանակ այդ երակները հեռացւում են աչքի գնտակից ոչ թէ առանձին առանձին թելերի նման, այլ սաստիկ նուրբ, բարակ, հարթ, համարեա թափանցիկ թաղանթի հետ միասին, որի մէջ նոքա ճիւղաւորւում են և որը ծածկումէ աչքի բոլոր կարծրաթաղանթը։

Եթէ յետ քաշենք վարի կոպը (մատով բռնելով կոպի համարեա ծայրը, ուր արտաքանունքներն են բուսնում) դէպի ներքև, մենք կտեսնենք այդ կոպի ներսի մակերևոյթը փայլուն, հարթ, և վարդագոյն շատ բարակ արիւնաղարձային երակներից կազմուած ցանցով։ Այդ երակներն ևս գտանւումեն բարակ նուրբ և համարեա թափանցիկ թաղանթի մէջ, որը նմանապէս կարելի է ունելիքներով բարձրացնել։

Այդպիսի նուրբ թաղանթ երակներով միասին գտանւումէ և վերին կոպի ստորին ներսի մասի (այսինքն դարձած դէպի աչքի գնտակը) մակերևոյթի վերայ։ *)

Մենք այդ կերպով տեսնումենք որ, թէ աչքի գնտակի (կարծրաթաղանթի) և թէ երկու կոպերի ներսի մակերևոյթի վերայ ևս գտանւումէ բարակ թաղանթ՝ արիւնաղարձային երակներով. որոնք աչքի սովորական առողջ միջոցին յիրաւի այնքան մանր և նեղ են, որ առանց ուշադրութեամբ նայելու, դժուար կարելի է

(*) Վերին կոպի ներքին մակերևոյթը տեսնել այնչափ հեշտ չէ ինչպէս վարի կոպինը, դորա համար հարկաւոր է դարձնել (շուռ տալ) կոպը, որ կատարւումէ շատ հեշտ և քնքշութեամբ՝ փորձուած բժշկի մատներով և շատ անգամ դժուար ու կոպտաբար և ոչ առանց երկիւղի՝ անփորձ մարդու ձեռքով։ Ի զուր տեղը վերին կոպը դարձնել խորհուրդ չեմ տալիս ոչ ոքին թոյլ տալ, բացի բժշկից, թէպէտ և քանի մի մարդիկ իրանք դարձնումեն կոպերը զուարճութեան համար։

նկատել։ *) Այդ բարակ թաղանթը որ ծածկում է թէ կարծրաթաղանթը և թէ կոպերը (ներսի կողմից) կոչւում է միացնող թաղանթ (соединительная оболочка). որովհետև կարծես թէ նա միացնում է կոպերի ներսի մակերևոյթը, աչքի գնդակի մակերևոյթի հետ։ **)

Եւ ահա այս միացնող թաղանթի մէջ զարգանում են զարհուրելի և երկիւղալի հիւանդութիւններ, որոնք շատ անգամ ամբողջ տեսողութեանը կորուստ են սպառնում։ Եւ այդ հիւանդութիւններից մէկն է նորածինների ապտերի շարաբային բորբոքումն անուանուած հիւանդութիւնը, որ շատ անգամ պատահում է երեխաներին՝ ծնունդից անմիջապէս կամ քիչ յետոյ։ ***)

Այս հիւանդութիւնը լաւ հետևանք հաղիւ է ունենում։ Իսկ ըստ մեծի մասին (ինչպէս վերը յիշեցինք) չափազանց երկիւղալի է աչքերի համար, մանաւանդ շնորհիւ այն աններելի անհոգութեանը, որ ունենում են երեխայի ծնողները կամ ազգականները։ Այդ հիւանդութիւնը թէպէտև ըստ երևոյթին շատ շաբաթներից յետոյ բոլորովին բժշկւում է, սակայն շատ անգամ ևս պատճառ է լինում դիւրազրգռութեան, աչքերի թեթև հիւանդանալուն և տեսողութեան վատ ու թոյլ լինելուն ամբողջ կեանքի ընթացքում։ և այսպէս պատճառ է լինում բոլորովին յաւիտենական կուրութեան։

(*) Իսկ երբ աչքի մէջ ընկնում մի որևիցէ ուրիշ մարմին (զբօրինակ աւազ, փոշի, ուտիչ հեղուկ, դրդռող գաղ և այլն) և կամ նա լալիս է—այդ մանր և նեղ երակները սաստիկ լայնանում, և լցվում են արիւնով և նկատելի են դառնում։ Աչքի կարծրաթաղանթը կարմրում, աչքերը ինչպէս ասում են, կարմրում կամ լցում արիւնով։

(**) Աչքի կարծրաթաղանթը (бѣлокъ) շրջափակում է իւր մէջ եղած աչքի կլոր մասը, որին եղջերէն են անուանում (роговая оболочка) այդ եղջերիկը թափանցիկ է ինչպէս ապակին և նորա միջով մենք տեսնում ենք աչքի գոյները, այսինքն զանազանակերպ գունաւորուած ծիածանը (раекъ). իսկ դորա մէջ նկատւում—սև բիրը (зрачекъ) այսինքն ծիածանի մէջ եղած կլոր ծակը, որի միջով մենք կարող էինք տեսնել աչքի բոլոր յատակը, եթէ աչքը բաւականաչափ լուսաւորուած լինէր։

(***) Բժշկական գիտութեան մէջ այդ հիւանդութիւնը բլենորեայ բորբոքումն է անուանւում, բացի դորանից աւելի երկիւղալի բորբոքումներ են պատահում (մեր բաղդից մեր մէջ շատ սակաւ) օրինակ, միացնող թաղանթի դիֆտերիտիկական բորբոքումն և այլն . . .

Ահա մեր նկատած հիւանդութեան պատակերը, ինչպէս որ լինում սովորական դէպքերում։ Նախ և առաջ երեխայի ծննդեան առաջին կամ երկրորդ օրը, երևում կոպերի և արտևանունքների կպչել և մածուցումն. նորածինը համարեա աչքերը չէ բաց անում. յետոյ երկրորդ կամ երրորդ օրը կոպերի տակից դուրս է գալիս լիմնագոյն կամ դաֆրանագոյն հեղուկ, *) կոպերի եզրները կարմրումեն, յետոյ նոյն իսկ կոպերը շատ անգամ ուռչում են, նոցա մորթը ձգուած է և շօշափելու ժամանակ բաւականին տաք. եթէ թեթև կերպով մատով սեղմենք կոպը, մատը կարծես թէ շօշափում է խմորի նման փափկութիւն և թողնում շատ անգամ փոքր ինչ փոս, այդ լինում այն դէպքում՝ երբ կոպերը ջրգողութիւն են ունենում (отекъ вѣкъ)։ Նորածինը սկսում անհանգիստ լինել, քիչ է քնում, աղաղակում, այրվում և յայտնի կերպով տանջվում։ Երեխայի հիւանդութեան 2—3 օրը, հետևաբար նորա կենաց 4 կամ 5 օրը, կոպերի տակից դուրս եկող հեղուկը շիճուկի նման պղտորւում, և դեռ այնքան թանձր չէ լինում, այլ հետզհետէ սկսում թանձրանալ և դառնում կատարեալ թարախ, միակերպ, սպիտակադեղին գոյնով՝ որը նմանում շատ դեղին արաժանի կամ սերի։ Վերջապէս երբ հիւանդութիւնը սկսում թուլանալ, կոպերի ուռոյցքը իջնում. դուրս եկող հեղուկը մածուցիչ յատկութիւն է ստանում. դառնում ճերմակ, տարածուող և աւելի լորձիւնային և նորա քանակութիւնը փոքրանում։ **)

Կոպերի ներսի մակերևոյթի միացնող թաղանթը նմանապէս և

(*) Կոպերի տակից դուրս եկող հեղուկը բաղկացած է արտասուքից և ուրիշ առանձին հեղուկից՝ որը դուրս գալով նոյն իսկ միացնող լորձիւնոտ թաղանթից՝ ծածկում է կոպերի ներսի մակերևոյթը և աչքի գնդակի կարծրաթաղանթը։ Հեղուկի դեղին գոյնը կախում ունի արիւնից դուրս եկող գունաւոր նիւթից. թէև երեխայի դեղնացաւի միջոցին հեղուկը աւելի դեղին է երևում։

(**) Շարաւային բորբոքման միջոցին աչքից դուրս եկող թանձր հեղուկը (կամ իսկ և իսկ ժահրը) լոփաղնց վարակիչ է, այսինքն եթէ դիպուածով մատերի, սպունգի, թաշկինակի միջոցով ընկնի առողջ աչքի մէջ, կարող է առաջացնել սաստիկ բորբոքումն, երկիւղալի հիւանդութիւն. (մանրամասնաբար նայիր վերը երես 11)։

աչքի գնտակի (կարծրաթաղանթի) միացնող թաղանթը փոխու

մեն իւրեանց ձևը. առաջին 12—24 ժամուայ մէջ նա սովորաբար առաձգական ու հարթ է լինում, յետոյ կարմրում և ուռչում. հիւանդութեան սաստիկ զարգացած և կամ անուշադիր թողած միջոցին՝ նա երկար ժամանակ կարծես թէ լինում է մսոտ, անհարթ, և երբեմն կարմիր ուռուցիկներով, որը մօտաւորապէս ընդաւոր կաղամբի նման է, միացնող թաղանթը տեղ տեղ ծածկուած է դեղին սերի նման շարաւով: քանի դէպքերում միացնող թաղանթի կարմիր մակերևոյթի վերայ առաջանումեն մոխրագոյն կամ դեղին մոխրագոյն տեղեր, որոնք ցոյց են տալիս թէ աչքերը շատ ծանր դրութեան մէջ են: Հիւանդութիւնը ըստ մեծի մասին հարուածում է երկու աչքերն ևս կամ միևնոյն ժամանակ և կամ թէ մինը միւսից յետոյ. հաղիւ է պատահում որ միւս աչքը երկար ժամանակից յետոյ ցաւէր (քանի մի շաբաթից յետոյ) և աւելի հաղիւ է պատահում որ երբէք չցաւէր:

Երեխային շրջապատողները երբեմն պնդումեն, թէ հիւանդութիւնը սկսուած է եղել 4—5—6 երորդ օրումը ծնունդից յետոյ և կամ աւելի ուշ, բայց հիւանդութիւնը այդ օրը միայն նշմարուած է եղել շրջապատողներից. և իսկապէս վաղ է սկսուած եղել. թէև սկզբում սաստիկ զարգացած չէ լինում: Յիրաւի, երբեմն պատահումէ որ երեխաների աչքերի շարաւային բորբոքումն երևումէ տասներորդ օրը, կամ քանի մի շաբաթ ծնունդից յետոյ. այդպիսի դէպքերի հիւանդութեան ծագման մասին կխօսենք (երես 9):

Լորձիւնը կամ շարաւը որ դուրս է հոսում աչքերից, մաշում է կոպերի եզերքները և կոպերի ու երեսի մորթը, որոնք շատ զգայուն են դառնում և սկսումեն ցաւել, կարմրումեն, թացանումեն, և մինչև անգամ լցումեն արիւնով. իսկ եթէ շարաւը ժամանակ առ ժամանակ սրբենք, հեռացնենք (ինչպէս կխօսուի վարը երես 18) և առանձին սպեղանիով աչքի մորթը օծենք, այն ժամանակ մորթի մաշուիլը, որ չափազանց նեղացնումէ երեխային, կդադարի:

Եթէ աչքի նկարագրուած այսպիսի դրութեան միջոցին բժշկին չդիմուի և եթէ ուշի ուշով բժիշկը ամենայն օր բժշկութիւնը գործ չդնի, որ պահանջումէ տոկունութիւն, համբերութիւն և ժամանակ, այդ դէպքում հիւանդութեան շատ կարճ միջոցին (երբեմն 2—3

օրում) կարող է աչքի գնտակը ծակուել և յետոյ աչքը ինչպէս ասումեն «կփչուի», երեխան կկուրանայ և տարաբաղդ կլինի իւր բոլոր կեանքի մէջ:

Այդ իւր ժամանակին նպատակայարմար հասցրած օգնութիւնը ազատումէ աչքը. այդ անկասկածելի է:

Հիւանդութեան ծագման պատճառները, ըստ իւրեանց նշանաւորութեան պահանջում են առանձին ուշադրութիւն և մանրամասն նկատողութիւն: Առաջ (դեռ այժմ ևս) այդ հիւանդութիւնը վերաբերում էին ցրտահարութեան, պայծառ լոյսին, ցրտին և ապականուած օդին ևն: *) Յիրաւի, նորածինների աչքերի հիւանդութեան թեթև դէպքերը (այն դէպքերը, որոնք կոչւում են միացնող թաղանթի հասարակ հարբուխ և բոլորովին նման չեն մեր պատմած աչքերի շարաւային բորբոքման) կարող են թերևս առաջանալ ցրտահարութիւնից, սակայն նորածինների աչքերի շարաւային բորբոքման իսկական դէպքերի պատճառները պէտք է որոնել ոչ թէ ցրտահարութեան կամ պայծառ լոյսի ներգործութեան, այլ երեխայի աչքերի ԷՐԱԿԼԵՂԵՆԻՆ վարակուելու մէջ, որ պատահում է երեխայի իւր մօր ծննդական ճանապարհներով անցնելու միջոցին:

Մօր յղութեան վերջին օրերում սերական մասերից դուրս է գալիս բաւական մեծ քանակութեամբ լորձիւնոտ և կամ լորձիւնաշարաւային հեղուկ (կանանցից շատերին լաւ յայտնի է նոցա սերական անդամների այն դրութիւնը, երբ դուրս է գալիս փսլինք կոչուած լորձիւնային հեղուկը—БѢЛИ), այդ ուտիչ յատկութեամբ հեղուկը շատ հեշտ կարող է կպչել երեխայի մարմնի զանազան մասերին, աշխարհ ծնուելու միջոցին, նոյնպէս և կոպերին ու արտևանունքներին և ընկնել արտևանունքների միջով աչքի

(*) Դժուար է հաւատալ թէ մինչև որ աստիճան անիմաստ կարծիքներ են եղել աչքերի շարաւային բորբոքման պատճառի մասին: Օրինակ մի քանիսները ենթադրումէին, թէ այդ հիւանդութեան սկզբնապատճառը պորտի չափազանց վաղ կապելն է (մինչդեռ նորա մէջ երակի զարկը նկատելիէ,) որով նորա կծու հիւթերն մնում և մտնում են աչքերի մէջ ու բորբոքումն առաջացնում:

ձեղքուածքի մէջ, իսկ այն տեղ ընկնելով (ծնունելու միջոցին կամ յետոյ) կարող է աչքերի շարաւային բորբոքումն առաջացնել։

Եթէ աչքերի սաստիկ շարաւային բորբոքումը երևումէ, ոչ թէ ծննդից անմիջապէս յետոյ, այլ տասներորդ օրում կամ քանի մի շաբաթից յետոյ (ինչպէս որ վերը ասուեցաւ), այդպիսի դէպքերում հիւանդութիւնը առաջացած է լինում, ոչ թէ ծնունդի ժամանակ վարակուելուց այլ (կարելի է ընդունել) վարակման նիւթը աչքին կպչելուց, որն կարող է գտանուել մօր կամ ծծմօր սերական մասերի միջում ևն։ *)

Շատերը չէին ընդունում, որ նորածինների աչքերի շարաւային բորբոքումը առաջանումէ երեխայի ծնունելու ժամանակ ասելով թէ երեխաները փակ աչքերով են ծնուում։ Բայց այդ ընդդիմախօսութիւնը թոյլ է. բաւական է որ երեխայի փոքրիկ գլուխը՝ սերական մասերի նեղ ճանապարհները անցնելու ժամանակ, նորա կոպերի արտաքին մասերին շատ քիչ քանակութեամբ լորձիւն կամ շարաւ կպչէ և կոպերի բացուելու միջոցին, մինչև երեխայի լուանալը, այդ վարակիչ նիւթից մի մասը կարողանայ ընկնել աչքի մէջ. վարակումը անշուշտ կհանդիպի։

Յիրաւի հիւանդ երեխաների մայրերը միշտ, թէ ծնունդից առաջ և թէ յետոյ, ունենում են սերական մասերից բաւականին մեծ քանակութեամբ հոսումն, որ առաւելապէս սաստկանում է ծնունդից յետոյ։ (Ուստիչ փսլինք ունեցող յղի կանանց մասին կարելի է մեծ վստահութեամբ նախագուշակել, որ նոցանից ծնուած երեխայն կ'հիւանդանայ աչքերի շարաւային բորբոքումով, թէև բաւականի դժուար է բացատրել թէ ինչպէս քանի մի երեխաներ բոլորովին ազատուում աչքերի շարաւային բորբոքումից։

(*) Բժիշկ Նիտշինը 12 տարեկան աղջկայ աչքերի շարաւային բորբոքման ժամանակ, նկատել է նորա սերական անդամներից շարաւի սաստիկ հոսումն։ Շմիդտը միևնոյնը գտել է 2½ տարեկան աղջկայ վերայ։ Աչքերի բորբոքումը այս բոլոր դիպուածներում առաջացել է յայտնապէս սերական անդամների շարաւային կամ լորձիւնային մասնիկների պատահմամբ աչքի մէջ որևիցէ կերպով ընկնելուց (ձեռքերով, կեղտոտ սպիտակեղէններով, կամ սպունգով ևն . . .)։

ազատ են մնում, չնայելով որ նոցա մայրերը ունենում են այդ հիւանդութիւնը և ոչ ինչ նախապաշտպանողական միջոցներ գործ չեն դնում)։ Եթէ միևնոյն ժամանակ մայրը սերական մասերում վէրքեր է ունենում և մինչև անգամ սիֆիլիտիկական հիւանդութիւն է ունենում, այն ժամանակ երեխաների աչքերի շարաւային բորբոքման ընթացքը անյաջող է լինում։ Հասարակ սակաւավարակ փսլինքն անգամ, եթէ նորածինների աչքերը դիւլ ազդրիւ են, կարող է աչքերի սաստիկ շարաւային բորբոքումն առաջացնել։

Գերմանացւոց երևելի բժշկապետ Գրէֆէի համոզմունքով, սերական անդամների լորձիւնային թաղանթի ամեն մի արտաթորող նիւթը վարակիչ է, և հիւանդութեան տեսակը իհարկէ կախումն ունի վարակիչ նիւթի թունաւորութեան աստիճանից, և մասնաւորապէս նաև անհատների տրամադրութիւնից, որոնց վերայ տեղափոփոխուած է այդ վարակիչ նիւթը. թուլակազմ հիւան դոտ երեխաները կարծես թէ աւելի տրամադրուած են վարակուելու, նոքա մինչև անգամ շատ թեթև վարակիչ նիւթից ստանում են սաստիկ շարաւային բորբոքումն, մինչդեռ լաւ կազդուրուած երեխաների մէջ այդ թոյնը առաջացնում է շատ անգամ միայն թեթև հիւանդութիւն, թէպէտ և պէտք է ասել որ քաջառողջ երեխաները բոլորովին չեն ազատուում աչքերի շարաւային բորբոքումից։

Աչքերի շարաւային բորբոքումից առաջացած հեղուկի վարակիչ ընդունակութիւնը և ուժիչ յատկութիւնը, առանց այլևայլութեան սաստիկ դեղ է. վարակումը շատ հեշտ է առաջանում ամենաթեթև հպելու միջոցին անգամ (օդի միջոցով) և առաջացած հիւանդութիւնը սաստիկ ծանր է լինում։

Այստեղ հարկաւոր է յիշել որ աչքերի միացնող թաղանթի բոլոր հիւանդութիւնների ժամանակ աչքերից դուրս եկող լորձիւնը կամ շարաւը վարակիչ է (իհարկէ զանազան աստիճանով), այսինքն, եթէ հիւանդ աչքի միջից առաջացած լորձիւնը կամ շարաւը պատահմամբ ընկնի առողջ աչքի մէջ, (օրինակ եթէ հիւանդը սրբէ աչքը այն թաշկինակով՝ որով նա արդէն սրբած է եղել երեսը և կամ եթէ աչքից դուրս եկած լորձիւնը, կամ շարաւը տեղափոխուած լինի առողջ աչքի մէջ թաշկինակով, մատով, լաթով, վրձինով,

ապունգով ևլն.) այն ժամանակ առողջ աչքն ևս կվարակուի մի ևնոյն հիւանդութեամբ, ինչպէս և հիւանդ աչքը, մինչև անգամ կարող է աչքի հիւանդութիւնը աւելի ծանրանալ։

Միացնող թաղանթի բորբոքումը այնքան աւելի վարակիչ զօրութիւն ունի, որքան որ նորա կարմրութիւնը և ուռոյցքը սաստիկ է, և որքան թանձր է աչքից դուրս եկած լորձիւնը կամ շարաւը։ Վարակման ոյժը այդ դէպքում օրինակ՝ շատ նման է քթի խարբուխի վարակման, որի մասին ոչ ոք չէ կասկածի։ (Եթէ քիթը սրբենք այնպիսի թաշկինակով, որը գործ է ածել խարբուխով հիւանդը, այն ժամանակ խարբուխը շատ անգամ է փոխուում)։ Աչքերի շարա-ային բորբոքումը ուռուցիկ վարակիչ, իսկ բորբոքումից առաջացած փոքրիկ քանակութեամբ լորձիւնը և շաբաւը քիչ վարակիչ են. բայց ինչ ևիցէ, կարող է բորբոքումն փոխուել մինից միւսը զրեթէ ընտանիքի մէջ բոլոր եղողներին. և ընդհանրապէս շատ մարդկանց մէջ (օրինակ զինուորների մէջ՝ նեղ կազարմներում, կրթարանական տներում ևլն)։

Ընկասկածելի է որ ընթերցողներից շատերը տեսած են թէ ինչպէս մի երեխայի աչքերի հիւանդութիւնից (ոչ թէ միայն նորածին երեխայի այլ և հասակաւորի) ընտանիքի շատ անդամներն ևս վարակվում են միևնոյն հիւանդութեամբ, իսկ իբրև օրինակ և խրատ կպատմեմ հետևեալ դէպքը. վեց տարեկան մանուկը քնած լինելով միևնոյն մահճակալի վերայ, իւր տասնվեց տարեկան եղբօր հետ, որը Միղանցքի*) շարաւային բորբոքումն ունէր, հիւանդացել էր աչքերի սաստիկ շարաւային բորբոքումով, նորա հոգատար մայրն ևս վարակուեցաւ նոյն ցաւով և ձախ աչքը կուրացաւ, այսպիսի սաստիկ վարակումն երկիւղալի չէր լինի եթէ մաքրութիւն և զգուշութիւն գործ դրուած լինէր։

Մանկաբարձական կամ կրթարանական տներում շատ յաճախ են պատահում աչքերի բազմաթիւ և ծանր շարաւային բորբոքումներ, և անկասկած որ այդ հիւանդութիւնը վարակումից է առաջացած

(*) Միղանցքից դուրս եկած շարաւային հիւթը (միղանցքի բորբոքման ժամանակ) նմանապէս շատ վարակիչ է, մինչև անգամ աւելի ևս վարակիչ է քան թէ նորածինների շարաւային բորբոքումից առաջացած շարաւը։

և կարող է մի երեխայից միւսին փոխուել, եթէ նպատակայարմար միջոցներն խստութեամբ գործ չդրուին։

Թէ ինչ ընթացք է ունենում նորածինների աչքերի շարաւային բորբոքումն՝ այս մասին միայն հետևեալը կասեմ։

Այդ զարհուրելի հիւանդութեան ամենաթեթև դէպքերը կարող են անցնել ինքն ըստ ինքեան, մինչև անգամ առանց վատ հետևանքների՝ տեսողութեան համար, եթէ աչքերը պահպանուում են բաւականաչափ մաքրութեան մէջ։ Զարմանալի է բնութիւնը որ բժշկում է այդ հիւանդութիւնը երբեմն նոյն իսկ այնպիսի դէպքերում, երբ աչքերի վերայ համարեա բոլորովին չեն հոգում—և այս մարդկութեան համար մեծ բաղդ է։

Բայց մի՛ կարծէք որ, առանց հոգացողութեան և բժշկութեան առողջացողների թիւը կարող է որքան ևիցէ համեմատուել լաւ հոգացողութեամբ և բժշկութեամբ առողջացողների թուի հետ։ Նայեցէք կոյր երեխաներին, նոցա մեծ մասը—չբժշկուածները և անխնամ մնացածներն են լինում։ Իսկ նոքա, որոնք ինչպէս հարկն է, բժշկուած են, տեսողութիւնը շատ քիչ անդամ են կորցնում։

Իսկ այն դէպքերում երբ երեխայի աչքերի խնամատարութիւնը անբաւական կամ անհաւասար ուրեմն և ֆեասակար է, բժշկութիւնը անհրաժեշտ է. որ իւր ժամանակին սկսած լինելով՝ մինչև անգամ ծանր դէպքերում ևս, ազատում է աչքերը (մարդու ամենաթանկագին գանձը) կուրանալուց։

Հիւանդութիւնը բժշկուում է մօտաւորապէս 4—6 շաբաթուայ ընթացքում, բայց կարող է երկարել մինչև 8 շաբաթ և աւելի, բոլորը նորանից է կախուած թէ երբ են սկսում բժշկել և ինչպէս են հոգում մաքրութեան և յստակութեան մասին։

Տեսողութեան կորուստը ըստ մեծի մասին առաջանում է սնունդի վատ պայմաններից, որին ենթարկուած են անժամանակ ծնուած և անխնամ մնացած երեխաները, սիֆիլիսով վարակուածները (ԻԾՆԷ), երեխայական ուժթափութիւն (маразмъ) անուանուած հիւանդութիւն ունեցողները, երբ մինչև անգամ առանց շարաւային բորբոքման ևս կարող է աչքը ֆեասուիլ և կակղել (յատկապէս եղջերիկը)։ Բացի այդ ձախորդ դէպքերից, աչքը միշտ կարելի է ազատել, եթէ միայն բժշկութիւնը եղջերիկի խանդարելուց առաջ

սկսած լինի։ Այն ժամանակ միայն կարելի է հիւանդ երեխայի ծնողներին յուսադրել, երբ նոքա համբերութեամբ և եռանդով հոգացողութիւն են անում երեխայի վերայ։

Թէ ինչ մեծ նշանակութիւն ունի կանոնաւոր և խիստ խնամատարութիւնը, ջերմեռանդութիւնը և համբերութիւնը, այդ երևում է հետևեալ օրինակից։

Բժիշկ Այրս (1876) համեմատեց շարաւային բորբոքման 100 դէպքերը, որոնք բժշկուած էին ակնաբուժական հիւանդանոցումը գիտութեան բոլոր կանոններին համաձայն և ամենախիստ հոգատարութեամբ՝ ընտանեկան բժշկութիւն ստացուած 100 դէպքերի հետ, երբ բոլոր կանոնները և հոգատարութիւնը էին զորձ դրուած իսկութեամբ և համբերութեամբ։ Այս վերջիններից 58 դէպքերում հիւանդութիւնը անցել էր մինչև անգամ եղջերիկի վերայ, 6ը՝ երկու աչքով կուրացան և 5ը՝ մի աչքով։ Իսկ հիւանդանոցում բժշկողները, բոլորն էս առողջացան. և բոլոր դէպքերում, բժշկութեան վերջէ շրջանում եղջերիկը առողջ էր մնացած։

Նախապաշտպանողական միջոցներ և բժշկութիւն։

Բժշկութիւնը, բառի բուն նշանակութեամբ, չի կարելի յանձնել ծնողներին, ազգականներին և ընդհանրապէս նոցա՝ որոնք բժիշկներ չեն. որովհետև մի քանի հանդամանքներով նա առանձին հմտութիւն, փորձառութիւն և զգուշութիւն է պահանջում. այդ մտքով խօսել բժշկութեան վերայ, զրքոյկիս նպատակը չէ, որը գրուած չէ բժիշկների համար (այսու ամենայնիւ տես բժշկութեան գլուխը)։ Բայց սակայն մի քանի դէպքերում բժշկութիւնից աւելի շատ կարևոր է նորածինների աչքերի նախապաշտպանողութիւնը և հիւանդութեան միջոցին օգնելը, մինչև բժշկի կամ լաւ մանկաբարձի ձեռնամուխ լինելը և բժշկելը. ծայրահեղ դէպքերում երբ ոչ մի տեղից բժշկական օգնութիւն յոյս չկայ, կարելի է խորհուրդ խնդրել ամեն մինից, որ փոքր իշատէ հասկացողութիւն ունի այդ հիւանդութեան մասին։

1) Նախապաշտպանողական միջոցները վերաբերում են թէ ծնողներին թէ դայեակներին, թէ նորածինների մայրերին և թէ բոլոր շուրջ եղողներին, մանաւանդ երեխաներին։

Եթէ դայեակի կամ մօր (որդեծնութեան օրերում) սեռական անդամներից սաստիկ լորձիւնային ուռուցիկ հեղուկ է հոսում՝ պէտք է աշխատել այդ հիւանդութիւնը բժշկել. որովհետև ինչպէս մեզ յայտնի է (տես երես 9) այդ հեղուկի մինչև անդամ շատ չնչին մասը պատահմամբ եթէ ընկնում է աչքերի մէջ, կարողանում է առաջացնել և զօրացնել աչքերի շարաւային բորբոքումն։ Իսկ, եթէ չընայելով բժշկութեանը, մօր սեռական անդամներից շարունակւում է վարակիչ հեղուկ հոսել և չէ դադարում, կամ հակառակ նախապաշտպանողական և բժշկութեան միջոցների, աչքերի շարաւային բորբոքումն նկատուած է եղել մի կամ մի քանի երեխաների վերայ՝ ծնելուց անմիջապէս յետոյ, հարկաւոր է բոլոր ուշադրութիւնը դարձնել նորածինների աչքերի մատրոնեան վերայ։

Այդ նպատակով երեխայի ծնելուց ամիջապէս յետոյ ուշի ուշով՝ հորացնում ենք երեխայի դեռ չբացուած կոպերի մորթը ամենամաքուր, լաւ լուացած և փափուկ սպունգով. այդ կերպով մենք կոպերից հեռացնում ենք և այն մածուցիչ հիւթը, որ ծածկում է նորածինների բոլոր մորթը և նորա հետ միասին հեռացնում ենք հեղուկի լորձիւնը կամ մօր թարախի վարակիչ մասերը, որոնք ծընելու միջոցին կարող էին երեխայի մորթի վերայ կպչել։ Դորանից յետոյ մի ուրիշ սպունգով սրբում ենք նմանապէս բոլոր երեսի մորթը։

Եւ յետոյ երրորդ ամենանուրբ սպունգով և կամ ամենաբարակ քաթանով (մաքրած ինչպէս և սպունգը) զգուշութեամբ և քնքշութեամբ լուանում ենք նոյն իսկ աչքերը լուծուած քլորի ջրով *). այդ միջոցին հարկաւոր է կոպերը թեթև կերպով հեռացնել աչքերից, որ կարելի լինի զգուշութեամբ կոպերի ներսի մակերևոյթը սրբել։

Այսպիսով մենք վարակիչ մասնիկները հեռացնում ենք աչքի

(*) Քլորի ջուրը (որ գտնւում է իւրաքանչիւր դեղատանը) պէտք է լուծել ջրի մէջ, նորա մի մասը մաքուր ջրի 10—15 մասի հետ։ Եթէ քլորի ջուր չի գտնւում, նորա փոխանակ կարելի է վերցնել հասարակ մաքուր ջուր (որովհետև անմաքուր ջուրը կարող է աչքերի զրութիւնը վատացնել) և կամ շատ թոյլ լուծուած կարբոլեան թթուատ. (մի ֆունտ ջրի հետ մի քառորդ զոլոտնիկ թթուատ) որովհետև աւելի թունդ լուծուածը աչքերին վնասում է։

միջից և աչխատում ենք արգելել շարաւային բորբոքման առաջանալը *)։

Եթէ վերոյիշեալ նախապաշտպանողական միջոցները գործ դրուած չլինէին, և աչքերի շարաւային բորբոքումն երևում է կամ երևացել է· այդ ժամանակ հարկաւոր է վարել այնպէս ինչպէս որ յետոյ կասենք։ (տես երես 18)

2) Եթէ մի աչքն է միայն հիւանդացել, այն ժամանակ պէտք է մտաբերել որ աչքից դուրս եկած թարախը սատանի վարակիչ յատկութիւն ունի և եթէ պատահմամբ միւս առողջ աչքի մէջ ընկնի, կարող է այնտեղ էլ շարաւային բորբոքումն առաջացնել։

Այդ միւս առողջ աչքը հարկաւոր է հիւանդութիւնից նախապաշպանել։ Իսկ նախապաշտպանողութեան ամենաճիշտ միջոցը այն է, որ առողջ աչքի վերայ պէտք է պահպանող պինդ կապոց դնել **) որ թոյլ չտայ թարախի մասնիկներին ընկնել առողջ աչքի մէջ։ Բայց պէտք է յիշել որ, այդ տեսակ կապոցը նորածնի համար անդորձածելի է, որովհետև նորածին ե-

(*) Աւելի լաւ է, որ բոլոր սպունգները նոր, մաքուր մանաւանդ նուրբ և պլնաւորապէս լաւ յստակուած լինին, և աւելի էլ հետևեալ կերպով։ Մի չիշ մաքուր (լաւ եռացրած) ջրի մէջ լուծում են 6 զոլոտնիկ մաքրած կարբոլեան թթուատ· մաքուր սպունգները կէս օր թրջոց են դնում այդ խառնուրդի մէջ և յետոյ միևնոյն խառնուրդի մէջ լաւ լանում են, վերջը կրկին լանում են այլ աւելի թոյլ խառնուրդի մէջ (մի քառորդ զոլոտնիկ մի ֆունտ ջրով) սպունգները պէտ է պահել անպատճառ կարբոլեան թթուատի խառնուրդի մէջ և կամ մաքրուածները բոլորովին չոր-բացածները պինդ փակած ամանների մէջ (ապակեայ, անագեայ և ն. . . ։) Մաքրուած կարբոլեան թթուատը ջնջում է ամեն մի վարակիչ նիւթ, և պիտի ամեն մի տան մէջ իրրև պաշար ունենալ· այդ թթուատի թոյլ խառնուրդը (օրինակ մի ֆունտ ջրի մէջ ածում են 3—4 զոլոտնիկ կարբոլեան թթուատ) շատ անգամ ածում են գիշերային ամանների (կարուրաների) արտաքնոցների մէջ և ն. . .

(**) Օրինակի համար կարելի է աչքի վերայ դնել շատ բարակ, փափուկ, թափանցիկ բէզինի թաղանթ, որի ծայրերը խլոլոֆոլմով թրջուած լինելով պինդ կպչում են աչքի շրջապատող մորթի վերայ, այսպիսով ոչինչ չի ընկնի աչքի մէջ· և այդ բէզինի թաղանթի միջով, համարեա ինչպէս ապակու միջով· երևում է աչքը։

բեխան շատ անհանգիստ է և այդ տեսակ փոքրիկ էակի համար կապոցը սասսարիկ պանջան է։ Վերջապէս միւս աչքի վարակուելու երկիւղը շատ անշան է և հեշտ է անհետանում եթէ բժիշկը մօտ է, եթէ բժշկութիւնը իւր ժամանակին է սկսուած և եթէ երեխան շրջապատուած է լաւ հոգացողութիւններով։

3) Հարկաւոր է միշտ յիշել որ աչքերից դուրս թորող շրթունքը սասսարիկ վարակիչ է (վարակման վերայ մանրամասնօրէն ասուած է 11 երեսում) և ուստիչ։

Աւելի լաւ է երեխայի մօտից բոլորովին չհեռանալ և միշտ զգուշութեամբ հեռացնել աչքերի մէջ հաւաքուող թարախը, որ միւս առողջ աչքի մէջ չընկնի որ և իցէ կերպով· հարկաւոր է երեխային պարկեցնել հիւանդ աչքի կողմը որ վարակիչ թարախը չկարողանայ ընկնել առողջ աչքի մէջ, և վերջապէս ամբողջ գիշերը հարկաւոր է շուտ շուտ մաքրել աչքը թարախից։ Թէ ինչպէս և ինչով պէտք է հեռացնել թարախը և աչքերը մաքրել· այդ մասին յետոյ կիսօսինք 18 երեսում։

1008/35924

4) Եթէ դիպուածով շարաւը ընկնի առողջ աչքի մէջ և առհասարակ եթէ թարախի արտաթորումը շատ լինի, այն ժամանակ հարկաւոր է այդ աչքը խսկոյն զգուշութեամբ և կրկնակի լանալ նախ գոլ և յետոյ քլորի ջրով (տես երես 15)· դորա համար կոպերը պէտք է զգուշութեամբ մատներով բաց անել (օրինակի համար ձախ ձեռի բութ մատը դնել վարի կոպի վերայ, իսկ ցուցամատը վերի կոպի վերայ և զգուշութեամբ բանալ) և ողողել, յետոյ կաթեցնել աչքի մէջ այդ գոլ կամ քլորի ջուրը փափուկ մաքուր սպունգով կամ կտաւով և կամ խոնաւակալ բամբակով և կամ ֆոլկով։ *) (пипеточка)։

(*) Աչքի փողակը բաղկացած է բէզինեայ գնտակից և ապակեայ խողովակից (վաճառւում է համարեա բոլոր դեղարաններում)· գնդակը երկու մատով սղմում են և յետոյ խողովակի ծայրը դնում են ջրի կամ դեղի մէջ· եթէ այդ միջոցին գնդակը այլևս չսեղմի, հեղուկը խողովակի մէջ կմտնի, որից կրկին աստիճանաբար սեղմելով շատ հեշտութեամբ կարելի է ջուրը կամ դեղը թողնել աչքի մէջ· Խողովակի ծայրը պէտք է աչքի մօտ բռնել (գնտակը անպատճառ դէպի վեր), բայց այնպէս որ նա երբէք աչքի որևիցէ մասին չկպչի· կաթիլները (դեղի) ածելու մի-

Նոյնպէս հարկաւոր է միշտ յիշել, որ այն սպունգներով, կտաւներով, երեսսրբիչներով և այլն, որոնցով երեխայի *) հիւանդ աչքերը սրբուած են, երբէք կարելի չէ սրբել թէ հասակաւորների և թէ մանաւանդ երեխաների առողջ աչքերը։ Որքան էլ որ գործածուած սպունգները, կտաւները, երեսսրբիչները և այն. հասարակ ջրով լուացուին, այսուամենայնիւ ոչ մի ժամանակ չէ կարելի բաշխաւոր լինել որ նոցա մէջ չի մնացել լորձիւնի կամ թարախի մասնիկների մի նշոյլ, որովհետև այս վերջինն անգամ, կարող է եղբայրների կամ քոյրերի առողջ աչքերը վարակել և շարաւային բորբոքումն առաջացնել։ Գործածուած սպունգները, կտաւները և այն. աւելի լաւ է այրել։

5) Բացի վերոյիշեալ նախապաշտպանողական միջոցներից աչքերի մաքրութեան և յստակութեան համար, հիւանդութեան առաջին շրջանում հարկաւոր է աչքերի վերայ սառը թրջուկներ (примочка) դնել, որոնք արգելում են արեան խողովակները արիւնով լցուելուց. թուլացնում են բորբոքումը և արգելք են լինում կոպերի չափազանց ուռչելուն։

Վերցնում են մաքուր բարակ գործածուած, լուացած, և ողորկած քաթան և պատրաստում են դորանից այնքան մեծութեամբ կտորներ, որոնցով կարելի լինի երկու կոպերը և փոքր ինչ աւելի ծածկել. այդ տեսակ կտորները (компресики) 3 կամ 4 ծալ են անում, թողում են սառոյցի կամ շատ պաղ ջրի մէջ և փոքր ինչ քամում են և դնում են մէջքի վերայ պարկած նորածին երեխայի կոպերին և փոփոխում են կէս կամ մի րոպէն անգամ (դորա համար 4 թրջուկ է հարկաւոր ունենալ, երկուսը կոպերի վերայ և միւս երկուսը մաքուր և սառը ջրով ամանի մէջ, որի ջուրը հարկաւոր է շուտ շուտ փոխել)։ Թրջուկները պէտք է գործածել հիւանդոյն առաջին օրից և փոխել զգուշութեամբ ու յաճախակի, որովհետև հակառակ դէպքում օրինակ 5 րոպէում մի անգամ—

ջոցին պէտք երեխային պարկեցնել մէջքի վերայ, որպէս զի նոքա աւելի յարմարութեամբ կամեն և երկրորդ որ ամբողջապէս աչքից դուրս չթափուին։

*) Ոչ թէ նորածին այլ և ցաւոտ աչքերով ամէն մի երեխայի և հասակաւորի։

նոքա օգուտի տեղ վնաս կրերեն։

Սառը թրջուկը 3—5 րոպէ տաք կոպերի վերայ մնալով տաքանում է և այդ դէպքում սառցնելու փոխանակ ներգործում է ինչպէս խաշու (припарка)։ Իսկ տաք թրջուկները՝ երակները արիւնով լցնում ուրեմն և աչքերի շարաւային բորբոքումը սաստկացնում են. ինչպէս օրինակի համար և օշոշից շինած խաշուն, որով երբեմն բժշկում են տղէտ մայրերը։

Եթէ թողնենք թրջուկը աչքերի վերայ մինչև նորա չորանալը, այն ժամանակ այդպիսի չորացած պինդ կամ կիսապինդ թրջուկը բացի ջերմութիւնից ճնշում է աչքերին որ նմանապէս վնասակար է։

Եթէ հիւանդութիւնը չէ սաստկանում, այլ ընդհակառակը թուլանում է, այսինքն շարաւի արտաթորումը նկատելի կերպով սակաւանում է, այդ ժամանակ կարելի է աւելի քիչ սառը ջրի (օրինակ ջրհորի) թրջուկ դրած դնել, այն էլ ոչ շարունակ, այլ օրը 6—4 անգամ, և իւրաքանչիւրը կէս ժամի չափ։ Միևնոյն ժամանակ հարկաւոր է որքան կարելի է ճաքրութիւն պահպանել։ Աչքի վերայ թարախի կաթիլ նկատելուն պէս, պէտք է սրբել փափուկ սպունգով և կամ խոնաւակալ բամբակով։

Կոպերի եղերքները մաքրելու համար աւելի լաւ է գործածել խոնաւակալ բամբակ և կամ փափուկ ճարպ (գտնւում է իւրաքանչիւր դեղանոցում)։

Վերոյիշեալ բամբակը շատ մաքուր է. շատ արագ ընդունում է իւր մէջ ջուրը և այլ հեղուկներ (ջրի վերայ դնելիս իսկոյն ընկղմում է, մինչդեռ հասարակ բամբակը չէ ընկղմում) նուրբ է, և շատ փափուկ։ Ճարպ ասած կտաւեղէնը նմանապէս շատ նուրբ հիւսուածք է, փափուկ շղարշի նման։ Որպէս զի թելերը կոպերի վերայ չմնան աւելի լաւ է բամբակը մարլեով փաթաթել, և աչքերը մաքրելուց յետոյ իսկոյն այրել կամ վարակիչ նիւթ ընդունող հեղուկի մէջ ձգել (կարբոլեան թթուի և ջրի թունդ խառնուրդի մէջ)։

Եթէ կոպերի եղերքներում թարախ է նկատւում, վերցնում են մարլեով փաթաթուած խոնաւակալ բամբակը *) (ջրի մէջ թրջած

(*) Եթէ այդ տեսակ բամբակ չգտնուի, թարախը կարելի է հեռացնել մաքուր քաթանի լաթով։

և լաւ քամուած) և դնում են կոպերի վերայ, թարախը իսկոյն ծը-
ւում է բամբակի մէջ։ Այս կերպով թարախը հեռացնելու համար,
բաւական է միայն մարլեով փաթաթած բամբակը անդադար դնել
աչքերի վերայ, առանց կոպերի եղերքները «ՐԷԵԸ» կամ «ՀՄԷԸ», ո-
րոհվեան յաճախակի շփելուց (մինչև անգամ թեթև) նուրբը կո-
պերի մորթը կարող է զրգուել, կարմրել և քերուածք ու ցաւ ա-
ռաջացնել։

Երբեմն կարելի է նուրբ փափուկ մաղեայ վրձին ևս գործ դնել.
բայց միևնոյն ժամանակ պէտք է չմոռանալ որ վրձինը պէտք է շուտ
շուտ լուացուի և լաւ մաքրուի։

Բացի թարախի հեռացնելուց, որ միշտ 10—15 րոպէին մի ան-
գամ երևում է աչքի ճեղքուածքից, հարկաւոր է վարի կոպը թե-
թև կերպով վար քաշել, որպէս զի շարաւը կոպերի մէջ չմնայ. և
դուրս եկածը աչքերից իսկոյն հեռացնել՝ վերը նկարագրուած եղանա-
կով։ Եթէ վարի կոպը շուտ շուտ վար չքաշենք, շարաւը կարող է
շատ հաւաքուել կոպերի տակ, և որովհետև «ՊՊԷԸ» յատկութիւն ու-
նի, կարող է եղջերիկը մաշել, որից նորա վերայ փառ կառաջանայ և
մինչև անգամ կարող է եղջերիկը ծակուել. աչքը ինչպէս ասում են
կարող է «դուրս գալ»։ Մանաւանդ հարկաւոր չէ թողնել, որ թա-
րախը կոպերի եղերքների վերայ չորանայ, եթէ կոպերը պինդ կըպ-
չում են (օրինակ գիշերով) այն ժամանակ առաջացած թարախը ձը-
գում է կոպերը, և բարձի նման ուռցնում։ Կոպերի եղերքների չորա-
ցած թարախը սրբելուց յետոյ, նոցա միջից մեծ քանակութեամբ
թարախ է դուրս գալիս, որի մնալը (ինչպէս ասուեցաւ) կարող է զար-
հուրելի հետևանքներ ունենալ։

Եթէ գիշերուանից սկսած մինչ առաւօտ կոպերի եղերքները, կա-
ղողացած են արդէն չորացած թարախով կպչել, այդ դէպքում եր-
բէք հարկաւոր չէ կոպերը բռնի բաց անել, այլ պէտք է չորացած
տեղերը սրբել տաք ջրով և կամ փոքր ինչ տաք ջրախառն կաթով։

Կոպերի մորթը ուտիչ թարախից (որն հաւաքուում է նոցա ե-
ղերքների վերայ) և կամ շարունակ թրջուկների ազդեցութիւնից
պահպանելու համար օգտակար է նոր նշի իւղով օծել, կոլյդ-
կրեմ և կամ աւելի լաւն է վազելին *) քսել, իսկ աչքի մէջ կոպե-

(*) Վազելինը ուժան է և գտնուում է համարեա բոլոր դեղատներում։

բի տակ այդ նիւթերը պէտք չէ որ ընկնեն, որովհետև նոքա փոքր
ինչ գրգռուում են։

Շատ հարկաւոր օգտակար և յարմար է մանաւանդ եթէ աչքից
շատ թարախ է դուրս գալիս, աչքերը լուանալ ջրի հոսանքով (ըս-
պունդի քաթանի և խոնաւակալ բամբակի տեղ)։ Դորա համար
պէտք է վերցնել աչքի գրեխիկ (спринцовка)*) որը բաղկացած է
մեծ րէզինի գնդակից և կարճ խողովակից, այդ գրեխիկով վերցնում
են ջուր կամ հեղուկ—դեղը և հոսանքը զգուշութեամբ թողնում
են աչքի մէջ որ պէտք է միշտ նոյն լինի (հարկաւոր չէ գնտակը շատ
սղմել) և աչքերի վերայ ուղղուած ոչ թէ ուղիղ, առաջից յետ կամ
վերից վար, այլ միշտ (կոպերը բաց անելով) քունքից դէպի
քիթը, ապա թէ ոչ սաստիկ և անկանոն հոսումը կարող է աչքերի
նուրբ մասերը վնասել, խողովակի ծայրը երբէք չպիտի կպչի աչքին։

Ջրի հոսանքը հետևեալ կերպով ևս կարելի է ստանալ, վերց-
նում են թիթեղեայ անօթ, որի յատակի մէջ ամրացած է բաւակա-
նի նեղ բեղենի խողովակ, ոսկրեայ կամ ապակեայ ծայրով միայն թէ
ծակ, այդ տեսակ անօթը կոչւում է Էսմարխի (Էսմարխ՝ բժշկի ա-
նուն է, որ սկսեց նորա գործածութիւնը) բաժակ։ Եթէ բաժակի
մէջ որևիցէ հեղուկ ածենք (տաք ջուր, խլորի ջուր, հեղուկ դեղ-
բոյսք և այն . . .) և ծայրը (ոսկրեայ կամ ապակեայ) բաժակից
ցած բռնենք, այն ժամանակ նորանից հոսանք կառաջանայ. բաժա-
կը կարելի է նոյնպէս կախ տալ օրինակի համար պատից փոքր ինչ
բարձր, այն ժամանակ բաժակի ցած ծայրից հեղուկը հոսանքով
դուրս կգայ. այսպիսով շատ դիւրութեամբ կարելի կլինի աչքերը
լուանալ (օրինակ կոպերի տակից դուրս սեղմած թարախը սրբել),
միայն կրկնում եմ որ հոսանքը պէտք է նոյն լինի և նորա ուղղու-
թիւնը ՀՈՆԻՑ ԴԷՊԻ ԻՆԸ, իսկ խողովակի ծայրը աչքերին կամ
կոպերին պէտք է չքսուի։ Այդ տեսակ թոյլ հոսանքով, շատ հեշտ
կարելի է մաքրել աչքը շուտ հաւաքուող թարախից և միշտ յար-
մարութեամբ գործ դնել։ Աչքերից դուրս եկած կեղտոտ շարաւով

(*) Վաճառուում է շատ դեղատներում, իսկ մասնաւորապէս Թիֆլի-
զում Գօրնիգի խանութներում (Головинскій проспектъ около Александров-
скаго сада) և Ցուրինովի (Тифлисъ въ складъ аптекарскихъ товаровъ Цуринова)
մօտ. այս երկու տեղից ևս կարելի է փոստով բերել տալ։

Ջուրը հաւաքում են հաստ թաշկինակով · որը, ջուրը ականջի մէջ չմտնելու և երեխայի վիզը ու գլուխը չթրջելու համար, պինդ գընում են պարկող երեխայի քունքի տակ և յետոյ լաւ լուանում են։

Թարախի սակաւանալու համեմատ ևս, պէտք է լուացումն էլ քչանայ, առանց որևիցէ հարկաղրութեան պէտք չէ աչքերը գրգռել (ջրի ամենաթոյլ հոսանքն անգամ փոքր ինչ գրգիռ է առաջացնում)։

7) Բացի դորանից կոպերը վար քաշելու միջոցին և շարաւը մաքրուելուց յետոյ հարկաւոր է աչքերի մէջ կաթեցնել (իւրաքանչիւր 2—3 ժամում 4 կամ 5 կաթիլ) փոքր ինչ տաք մաքուր ջուր, որի մէջ լուծուած պիտի լինի շեր, տանին, կամ քլորի ջուր (աչքերի այդ տեսակ դեղերին աչքի կապլիներ են անուանում)։ Վերցնում են 3½ զոլոտնիկ քլորի ջուր՝ 15 զոլոտնիկ ամենամաքուր ջրի հետ, կամ 3—5 զոլ. տանին *) 8 զոլոտնիկ ջրի հետ. այդ խառնուրդից իւրաքանչիւր ժամը մի անգամ 3—4 կաթիլ ածում են աչքերի մէջ։

Կապլինները աւելի լաւ է ածել աչքի խողովակով կամ փողակով (որը նկարագրուած է երես 17) իսկ եթէ դոքա չգտնուին նոցա փոխանակ կարելի է արծաթէ դրգալ, կամ բաղի գրիչ և կամ ուղղակի շիշը գործածել. սակայն ամենից լաւը փողակն է, որովհետև աւելի յարմար և մաքուր է և բացի դորանից շատ թանկ էլ չէ (50 կ.)։ Փողակը պէտք է միշտ պատեանի, կամ թղթի մէջ պահել և ընտակը դէպի վար չդնել. որովհետև խողովակի հեղուկ դեղը կարող է ընդունել ընտակի մէջ մնալ և փչացնել։ Եթէ կապլինները փոքր ինչ պղտորվին, նոքա կանպիտանանան, և հարկաւոր կլինի նորը վերցնել **)։

Բոլոր մեր ցոյց տուած միջոցները եթէ ճշդութեամբ գործ դրուին, շարաւային բորբոքումն փոքր առ փոքր կթուլանայ ու մի քանի շաբաթից յետոյ բոլորովին կանցնի, և աչքերը կառողջանան։ Բժշկու-

(*) Բայց ոչ կարբոլեան թթուատ, որովհետև բժիշկ Գէրլօվի փորձերից և դիտողութիւններից երևում է որ այդ թթուատի մինչև անգամ թոյլ խառնուրդը (նոքա մի մասը ջրի 100 մասի հետ) կարող է թարախի արտաթորումը սաստկացնել և եղջերիկը վնասել։

(**) Կապլինները արեգակի տակ պէտք է չդնել, այլ պահել հով տեղ շուաքում և փոշի չմտնելու համար ապակին պէտք է պինդ ամրացնել։

թեան 6—12 որոշ օրը նորածինը սկսում է աչքերը բաց անել (կիսամթութեան մէջ), բայց դեռ ևս կվախի է լոյսից, և դորա համար երեխային պէտք է առ ժամանակ դուրս չհանել։

Թէպէտ երեխան փոքր առ փոքր սկսում է աչքերը բաց անել աւելի երկար ժամանակ, միայն թէ բոլոր վերոյիշեալ միջոցները պէտք է տակաւին շարունակել մինչև բոլորովին բշժկուիլը, ի հարկէ միևնոյն ժամանակ պիտի աշխատել թրջուկների և կապլինների գործածութիւնը աստիճանաբար սակաւացնել։

Այսպէս է կարող էր վերջացնել, որովհետև աչքերի շարաւային բորբոքումն առաջանալուց յետոյ, անհրաժեշտ է արդէն բժշկի ներկայութիւնը, և բժշկութիւնը պէտք է գործ դնել գիտութեան կանոնների համաձայն։ Եթէ ծնողները կամ ընդհանրապէս երեխայի հոգատարները մինչև բժշկի գալն կատարեն այն ամենը, ինչ որ ես պատմեցի նախընթաց երեսներում, նոքա կատարած կլինեն իրանց պարտականութիւնը և գրեթէ արած կլինեն այն ամենը, ինչ որ առանց բժշկի կարելի էր անել նոցա համար։

Ամենայն ոք, ով կարող է—թող տանէ երեխան բշժկի մօտ, ապաստանարան, մանկաբարձական տուն, հիւանդանոց, բժշկանոց, և կամ ուղղակի բժշկի տունը, տեղեակ բժիշկը միշտ աւելի շուտ և լաւ կօգնի, քան թէ որևիցէ հրահանգ։

Բայց ինչ պէտք է անել այսպիսի դժբաղդ դէպքերում, երբ նորածինը գտնւում է այնպիսի քաղաքում կամ գիւղում, ուր ոչ բժիշկ կայ և ոչ մանկաբարձ, և կամ երբ հանգամանքներն ու միջոցները չեն ներում երեխայի մի ուրիշ տեղ տանել։ Կարելի՞ է արդեօք այսպիսի դէպքերում առանց բժշկի գործել։ Բաւական է արդեօք սահմանափակուել և միայն այն միջոցները կատարել, որոնք յիշուեցան նախընթաց երեսներում։

Եթէ շարաւային բորբոքումն վերոյիշեալ միջոցները գործ դնելով չէ դադարում, եթէ նորածինը աչքերը չէ բացանում, եթէ աչքերից դուրս հոսող շարաւի քանակութիւնը փոխանակ նուազելու շատանում է և եթէ հիւանդութեան սկզբից մի կամ մի և կէս շաբաթ շարունակ ոչ մի բժշկական օգնութիւն չէ հասել, այսպիսի տխուր դէպքում (երբ սարսափելի վտանգ է սպառնում) թող խմացողը և

կարողութիւն ունեցողը*) համարձակ ձեռք առնի հետևեալ միջոցները—աչքերի քաշելու, ապա կոպերի բացելու։ **)

Այդպիսի երկիւղալի ժամանակ ոչ միայն պէտք է չվախենալ աչքերի բժշկութիւնը փորձուած բժշկին յանձնել, որ սովորած է մարդկային հիւանդութիւններին վերաբերեալ ամբողջ գիտութիւնը,—այլ մինչև անգամ պէտք է (ով կարող է) չվախենալ ասանց բժշկի կատարել այն բոլորը ինչ որ պատմելու եմ հետևեալ տողերում։

1) Պէտք է իմանալ կոպերի աստիճանը, այսինքն կոպերին այնպիսի դրութիւն տալ որ նոցա ներսի (հիւանդութեան ժամանակ կարմիր) մակերևոյթը դառնայ դէպի դուրս և երևի։ Այս այնքան դժուար չէ, երբեմն նաև շատ հեշտ՝ ժիր և քնքուշ ձեռքեր ունեցողի համար։ Վարի կոպը շուռ տալ շատ դիւրին է, բաւական է միայն դնել մատը (օրինակ ցուցամատը) կոպի ազատ եզերքի մօտ և թեթև կերպով ցած քաշել. այդ ժամանակ վարի կոպի ներսի կարմիր մակերևոյթը շուռտով կերևի և երբեմն նորա աւելի խորը կարմիր մասը զանակի ձևով դուրս կոչուի, այսպիսով կոպը լաւ շուռ է գալիս և կարողանում է երկար ժամանակ այդ դրութիւնը պահպանել։ Վերի կոպերը դժուար է դարձնել, որի համար պէտք է ձախ ձեռի բութամատը զգուշութեամբ դնել վերին կոպի (վերին կիսի) վերայ ***), իսկ աջ ձեռքի բութ մատով և ցուցամատով համարձակ և պինդ բռնել արտևանունքները և յետոյ նոցանով բարձրացնել կոպի եզերքը նոյն իսկ աչքի գնտակից միևնոյն ժամանակ կոպի վերայ դրած ձախ ձեռքի բութ մատը պէտք է փոքր ինչ ցածացնել (աչքից չբաժանելով) դէպի աջ ձեռքի արտևանունքներ բռնած մատերը։ Եւ նոցանով ձախ ձեռքի բութ մատը****) յենման կէտ ընդունելով, դարձնել վերին կոպը։ Մի քանի փորձերից յետոյ (վախել հարկ չկայ, միայն չպէտք է ճնշել աչքի գնդակը) կոպի ներսի մակերևոյթը յանկարծ երևում է և շատ անգամ նորա հետ նկատւում է մութ, և կարմիր մսոտ գլանակ. շատ

(*) Զորօրինակ նոր սովորած մանկաբարձը, լաւ ֆէյլդշերը, աներկիւղ և վստահ մայրը, և վերջապէս իւրքանչիւր զարգացած մարդը։

(**) Բայց միշտ վերը ասածը շարունակելով։

(***) Իսկ միւս մատերը, գլխի վերայ (միայն չմոտեցնելով հոգեատուներից։

(****) Այս մատը կարող է յենուլ շօշափելի ոսկրի ծայրին։

անգամ ձեռքերը վերցնելուց յետոյ էլ կոպերը շուռ տուած են մնում. կարիքը վերջանալուց յետոյ կոպերին կրկին իրանց նախկին դրութիւնը պէտք է տալ և եթէ կոպը ինքն իրան չդառնայ այն ժամանակ մատը տանելու է կոպի տակը և ցած քաշելու։

2) Դարձրած կոպերը, որոնք աչքերի շարաւային բորբոքման ժամանակ կարմիր, ուռած և մսոտ են լինում և լցուած շարաւով, օգնում են *) դեղով նոր, մաղեայ (ոչ փոքր այլ մեծ ու բաւականի խիտ) վրձինի օգնականութեամբ։ Դորա համար առաջուց պատրաստում են, ա) բորակաթթուային արծաթի **) խառնուրդ (մի քառորդ զոլոտնիկը 13—14 զոլոտնիկ ամենամաքուր եռացած և կամ աւելի լաւ է զտած ջրի հետ), բ) զործածական մաքուր աղի խառնուրդ (կէս չայի գդալը մի գինու բաժակ ջրի հետ). գ) ամենամաքուր ջուր. դ) երկու մաղեայ վրձիններ և ե) երկու երեսսրբիչ։

3) Անհրաժեշտ է իմանալ թէ ինչպէս պէտք է անել երեխային կոպերի ներսի մակերևոյթը օծելու ժամանակ։ Ձեռքի վերայ բռնած կամ նստած և կամ կիսաթեք դրութիւնը անյարմար է, այլ պէտք է որ երեխայի գլուխը անդրդիծ և մանաւանդ օծումը յաջողակ լինի։ Ամենից լաւ է այսպէս անել. օծողը (օրինակ մանկաբարձը) պէտք է ծունկ ծնկի տուած նստէ երեխան բռնողի (օրինակ դայակի) դէմ ու դէմը։ Մանկաբարձը կամ փորձուած ֆէյլդշերը պէտք է երեխայի գլուխը դնէ երկու ծնկերի արանքում և առանց սաստիկ սղմելու անշարժ, դրութեան մէջ պահպանէ։ Դայակը պէտք է ոտները և իրանը ծնկան վերայ դնէ և պինդ բռնէ, նմանապէս և ձեռքերը, որպէս զի նոցա շարժողութիւնը արգելք չլինի բժշկին։ Գլխի տակ կլէօնկայ և երեսսրբիչ են դնում։ Այդ գործողութեան ժամանակ երեխան աղաղակում է, որովհետև նորան այս բոլորը անախորժ է թւում, թէպէտ և ցաւ չէ զգում։ Եթէ երկու հոգի երեխային սեղանի վերայ բռնեն, այն ժամանակ բժիշկը կարող է կող-

(*) Կամ ինչպէս երբեմն ասում են «դաղումն»։

(**) Բորակաթթուատի արծաթ (азотнокислое серебро —ляписъ) ասում է գժոխաքար, և գտնւում է բոլոր դեղատներում, խառնուրդը պէտք է մաքուր լինի և թափանցիկ, եթէ նորա մէջ հատիկներ, կամ թոզի մասնիկներ են գտնւում կամ եթէ վարդագոյն է դառնում կնշանակէ որ նա փչացած է և պէտք է նորը վերցնել։

քից կանգնել և կոպերը շուռ տալ (ինչպէս վերը ասուած է), աւելի յարմար է եթէ լոյսը օծելու ժամանակ ձախ կողմից ընկնէր; իսկ բաժակով դեղը, ջուրը, վրձինը և այլն . . . — օծողի աջ կողմից լինէին։ Երեխայի գլուխը ամրացնելով՝

4) սկսում են օծել, առաջուց փոքրիկ բաժակի մէջ ածելով բոբակաթթուային արծաթի (азотнокислое серебро) խառնուրդ, որի մէջ դնում են վրձինը։ Շուռ տալով մի կոպը (ինչպէս վերը ասվեցաւ) վրձինը թաթախում են դեղային խառնուրդի մէջ և համարձակ ու հանդարտ օծում են նորանով շուռ տուած կոպը, յետոյ մի ուրիշ վրձինով աղի խառնուրդ են քսում և սորանից անմիջապէս յետոյ զգուշութեամբ լւանում են մաքուր ջրով գրեխիկի (ինչպէս ասուած է 21—22 երեսներում) կամ շատ անգամ ջրի մէջ թաթախուած վրձինի և կամ ջրի հոսանքի օգնականութեամբ (տես երես 21)։ Ջուրը ականջը չմտնելու և ընդհանրապէս գլուխը չթրջելու համար, երեխայի գլուխը փաթաթում են երեսբրիչով (պէտք է հին երեսբրիչ վերցնել, որովհետև դեղերը բծեր են թողնում)։ Մի կոպը վերջացնելուց յետոյ դարձնում և օծում են միւսը. եթէ ժիր մատներով (մինչև անգամ մի ձեռքի) յաջողւում է մի անգամից երկու կոպերն էլ շուռ տուած պահել (բայց այնպէս որ կոպերի մէջ միջոց կամ ճեղք չմնայ, որից հեղուկ—դեղը կարողանայ ներդործել աչքի գնտակի վերայ)—այն ժամանակ կարելի է օծել և լուանալ երկու կոպերն էլ միասին։

Կոպերի շուռ տուած ժամանակ (մէկը կամ երկուսը միասին) նոցա մէջ պէտք է միջոց կամ ճեղք չդանուի (դորա համար բաւական է որ կոպերը պինդ սեղմենք), և պէտք է յիշել որ դեղի խառնուրդը, որով կոպերը օծումենք, կարող է այդպիսի ճեղքից ընկնել աչքի գնտակի վերայ. դեղի ուտիչ յատկութիւնները բորբոքված կոպերի վերայ բուժիչ կերպով են ներդործում, բայց միևնոյն ժամանակ առողջ կոպերին և եղջերիկին կարող են վնասել։ Կոպերի ներսի մակերևոյթը օծելուց յետոյ օգտակար է նոյն կերպով օծել նաև կոպերի արտաքին մակերևոյթը (նոցա փակ ժամանակ) մանաւանդ մորթի կարմրած տեղերը և յետոյ ջրով լւանալ։

Օծողը պէտք է զգուշութեամբ ձեռքերը սապոնով լւանայ, որ մի գուցէ պատահմամբ շարաւի կամ լորձիւնի մասնիկների միջոցով

վարակէ իւր կամ ուրիշների աչքերը։ Նորա երեսբրիչը պէտք է առանձին կախած լինի և ոչ ոք պիտի չգործածէ։ Բաժակները և վրձինները պէտք է 3—4 անգամ մաքուր ջրով լւանալ և առանձին դնել մինչև միւս անգամւայ գործածութիւնը (ամենից լաւ է վրձինները պահել մաքուր և չոր տուփերի մէջ)։

5) Օծելուց յետոյ կոպերի վերայ անպարար սառը թրջուկների են դնում, ինչպէս վերը ասած է (երես 8) և այնքան երկար, որքան շատ թարախ է դուրս հոսում։

6) Օծումը պէտք է անել ամենայն առաւօտ և շարունակել ամենայն օր մինչ շարաւի արտաթորման նուազելը*). վերոյիշեալ կապլենները շարունակում են առաջւայ պէս կաթեցնել, յետոյ հետզհետէ քչացնելով մինչև աչքերի բոլորովին առողջանալը, այնուհետև դադարեցնում են։

[Այդ զարհուրելի հիւանդութեան դէմ գործ դրւած միջոցների մասին (օրինակ ատրօպին, lapis mitigatus, in substantia, eserinum, և էն.) ես պէտք է չխօսեմ, որովհետև նոցա գործածութիւնը բացի բժշկներից, ոչ ոքի մատչելի չէ]։

5—6 անգամ օծելուց յետոյ, թարախի արտաթորումը արդէն բաւական նուազում է **), երեխան սկսում է աչքերը բաց անել, բայց այդ օծումը դարձեալ անպատճառ պէտք է շարունակել ամենայն օր (յետոյ օր մէջ կամ երկու օրը մի անգամ) մի քանի շաբաթ շարունակ (6—8)։ Եթէ օծումը շատ վաղ է ընդհատւում այն ժամանակ հիւանդութիւնը մի քանի օրից յետոյ նորից կրկնւում, թարախի արտաթորումը սաստկանում և բորբոքումը նորոգւում է։

Բոլոր իմ նկարագրած միջոցները պէտք է նոյն իսկ սկզբից գործ դրւի համբերութեամբ, բարեխղճութեամբ և երկար ժամանակ. այն ժամանակ յաջողութիւնը անկասկածելի է, որովհետև երբեմն թւում է իբր թէ աչքերը բոլորովին առողջ են, երեխան ազատ բաց է անում աչքերը, ծնողները (մանաւանդ երկչոտ) կարծում են թէ

(*) Թարախի սաստիկ արտաթորման ժամանակ էս, մինչև անգամ եթէ եղջերիկը սկսում է վնասել և նորա վերայ առաջանում են վէրքեր, չպէտք է օծումը ընդհատել։

(*) Հարկաւոր է նկատել որ օծելուց մի քանի ժամ անցած թարախի արտաթորումը սաստկանում է և յետոյ սկսում է փոքր առ փոքր նուազել։

այլ և բժշկութիւն հարկաւոր չէ, բայց եթէ կոպերը դարձնելու լինինք և եթէ նշմարուին հիւանդութեան հետքեր, սաստիկ կարմրութիւն, շարաւ կամ լորձիւն, ուռոյց.ք, անհարթութիւն և մինչև անգամ մի յաւելուածներ *), որոնք եթէ տակաւին բժշկուած չեն, կարող են աչքերի և տեսողութեան վերայ բոլոր կեանքում վատ ներգործութիւն ունենալ, բժշկութիւնը չէ կարելի բոլորովին վերջացած համարել։

Աչքացաւ ունեցող երեխաների բնակարանների մասին։

Բացի վերոյիշեալ նախապաշտպանողական միջոցներից և բժշկութիւնից, հարկաւոր է մեծ և անհրաժեշտ ուշադրութիւն դարձնել նաև օդի և այն սենեակի մաքրութեան վերայ ուր ապրում է նորածինը (միևնոյն է հիւանդ լինի նա թէ առողջ), որովհետև աղտոտ և խեղտուկ բնակարաններում հիւանդութիւնը աւելի և ևս վատ ընթացք է ունենում։ Սենեակը կարելի եղածի չափ մեծ, բոլոր միացածներից յարմար, լաւ հողմահարուած, փոքր ինչ մթնացրած և վարագոյրները մութագոյն պէտք է լինին, իսկ մահճակալի մօտ հարկաւոր չէ ունենալ վարագոյր կամ պատսպարան, որոնք արգելում են օդի ազատ մուտքը։

Սենեակի մէջ ծխախոտ և կամ հոտաւէտ թղթեր ու փոշիներ պէտք է չծխել, որովհետև նոքա բոլորը աւելի ընդունակ են սենեակի վատ օդը ծածկելու և վատացնելու քան թէ որևիցէ կերպով մաքրելու (ինչպէս ոմանք ենթադրում են)։ Ծխախոտի ծուխը և հոտաւէտ թղթերի, փոշիների ու կնդրուկների մուրը (մինչև անգամ եթէ նոցա քանակութիւնը քիչ է) օդը ապականում են և աչքերը սաստիկ զրգռում, մանաւանդ թէ առողջ և թէ հիւանդ նորածինների քնքոյշ աչքերը։

Մանկական սենեակներում հարկաւոր չէ կեղտոտ բաց կոպոնը (урыльникъ) և ամաններ պահել։

Երեխան սենեակում եղած միջոցին պէտք է սենեակը չաւելել, որովհետև բարձրացող (երբեմն մինչև անգամ աննկատելի) փոշին, նմանապէս զրգռում է աչքերը, աւելի լաւ է յատակը փոքր ին խոնաւ լինի քան թէ հեշտ բարձրացող փոշուով ծածկուած, զորգ փռելը աւելորդ է, որովհետև նա էլ փոքր ի շատէ փոշի է պահում իւր մէջ։ Մանկական սենեակում ոչ մի խանձարուր և սպիտակեղէն պէտք է չլորացնել և միայն ամենամաքուր սպիտակեղէնները կարելի է թոյլ տալ որ մնան, պէտք է չպահել նմանապէս երեխային հարկաւոր չեղած ոչ մի առարկայ։

Օդի մաքրելը

Օդը մաքրելու և սենեակի մաքրութիւնը պահպանելու ամենալաւ միջոցներն են. 1) հողմահարութիւնը՝ պատուհանները բանալով, օդանցքների *) և հողմահարների միջոցով, բուխարները կամ վառարանները վառելով, որով սենեակի օդը անդադար վառարանի մէջ է ծծուում և փոխարինուում է դռներից, պատուհաններից և ճեղքերից ներս մտնող մաքուր օդով։ Բայց ի հարկէ այսպիսով էլ սենեակի օդը չէ կարող մաքրուել, եթէ նոր օդը ներս է մտնում աղտոտ, հոտած և գարշահոտ փոսերով ծածկուած բաղից կամ փոշեյից և անմաքուր փողոցից։ Աւելի ևս երկիւղ պէտք է կրել մօտ տեղերում նոր շինուող տներից, որովհետև շինութեան ժամանակ յառաջացող կրային նուրբ փոշին, օդի հետ միասին ճեղքերից ներս մտնելով շատ անգամ (հէնց առաջին անգամից) արդէն անասելի տանջանքներ է պատճառել չափահասների և մանաւանդ երեխաների քնքոյշ աչքերին **)։ Բացի սորանից օդը կարելի է մաքրել՝

2) օրը երկու անգամ սենեակը օդամաքրիչ խառնուրդի ***) փոքր-

(*) Երեխային չմրսեցնելու համար (եթէ սենեակի օդը ցուրտ է, կամ թէ քամու ժամանակ օդը սաստիկ ուժով է մտնում) անհրաժեշտ է պատսպարել նորան, իսկ աւելի լաւ է առժամանակ տեղափոխել մի ուրիշ մաքուր սենեակ (ինչպէս և սենեակ մաքրելու միջոցին)։

(**) Ինչպէս յայտնի է քարտաշները, պաստառադործները, ծխախոտի գործարանում աշխատողները և ... շատ անգամ աչքեր գրգռող փոշուց աչքացաւի են ենթարկվում։

(***) Օրինակի համար վերցնում են անուշահոտ կարբոլեան թթուատի խառնուրդ, բևեկնեայ ջուր (скипидарная вода), օդեկոլոն, սպիրտ (որի մէջ փոքր ինչ բևեկնեայ իւղ է լուծուած, մի մաս իւղ և երկու մաս սպիրտ), եթէ սոքա չգտնուին, կարելի է սենեակների մէջ մի ման կպրաձիւթ դնել. փալտից դուռ սարերում, ամառանոցներում, գիւղերում եթէ տան չորս

(*) Բժշկութիւնը, այսինքն այդ յաւելուածների ոչնչացնելը երբեմն շատ երկար բժշկութիւն և խիստ հայեցողութիւն է պահանջում։

ըիկ մասնիկներով. այդ խառնուրդը ածում են այն փոքրիկ գործիքների մէջ, որոնց միջոցով սրսկում են սենեակները, օդէկոլոնով, դուխիներով և ն. . . այդ գործիքները կոչւում են ֆլուկներ (пульверизаторы) կամ փոշեցաններ (լինում են զանազան տեսակ), որոնցով հեղուկը փոխարկւում է ամենամանր և ամբողջ սենեակի մէջ հեշտութեամբ տարածւող փոշիներ։

Մանկական սենեակը աւելի լաւ է լուսաւորել ոչ թէ կանթեղով այլ բնաճարպի մոմով (стеариновая свѣча) թղթեայ լուսամփոփով ծածկւած (եթէ մանկական սենեակում աչքացաւ ունեցող երեխաներ կան). կանթեղը երբեմն կարող է ծուխ տալ, իսկ ծուխը նոյնպէս վնասակար է աչքին ինչպէս և փոշին։

Սենեակի ջերմութեան աստիճանը չափազանց շատ պէտք է չլինի (16° Ռէօմիւրի, միայն ծննդեան առաջին օրերը պէտք է աւելի տաք լինի) որովհետև տաքութիւնը նպաստում է բորբոքման սաստկանալուն։

Այս բոլոր միջոցները (29—30 երես) պէտք է գործադրւին ոչ միայն ակէրի շարաւային բորբոքման (որի մասին է գլխաւորապէս մեր խօսքը) այլ և որևիցէ ընդհանուր ախտացաւի ժամանակ, երբ երեխան կարծես թէ իւր հիւանդութիւնը չզգալով աղատ բաց է անում աչքերը և որ ժամանակ հիւանդութիւնը կայանում է միայն աչքերի փոքր ինչ կարմրութեան, լորձիւնի արտաթորման և թեթև լուսավախութեան մէջ (свѣтобоязнь). որովհետև աչքերի թեթև ցաւն անգամ, զգուշութիւն չպահպանելիս և վատ պայմանների միջոցին կարող է մի քանի ամիս շարունակւել և մինչև անգամ փոխարկւիլ սարսափելի շարաւային բորբոքման։

Իսկ գալով այլ խնդրի, թէ որքան ժամանակ երեխային սենեակի մէջ պէտքէ պահել, այս մասին պէտք է ասել որ հենց հիւանդութեան ղբաւոր շրջանը անցնելուց անմիջապէս յետոյ, աչքերի կողմից նորան ոչ մի արգելք չկայ զով օդի մէջ դուրս գալու։ Երբ երեխան սկսում է լաւ եղանակում, մանաւանդ տաք կլիմայի մէջ աչքերը աղատ բաց անել, այդ դէպքում պէտք է հանել նորան զով, նոր, մաքուր, անփոշելից օդի մէջ, մոխրագոյն կամ կապոյտ քօղով պաշտպանելով աչքերը պայծառ լոյսից։ Երեխային արևի տակ պէտք է չտանել, այլ ստուերի մէջ պահել, նորա աչքերը պայծառ արեգակի կամ սաստիկ լուսաւորւած, սպիտակ, դեղին պատերի և ն. . . կողմը չդարձնել. մաքուր և զով օդն է հարկաւոր նորան, իսկ պայծառ լոյսը դեռ ևս վնասակար։

Աչքերը փոքր առ փոքր սկսում են աւելի և աւելի դիմանալ լոյսին և վերջապէս բոլորովին առողջանում են, բայց յարմար դէպքում առողջ աչքերն էլ հարկաւոր է ցոյց տալ բժշկին (եթէ բժիշկը հիւանդութեան ժամանակ չի տեսել և կամ բժշկութիւնը կիսատ է թողել) և խնդրել նորան որ նայէ թէ հիւանդութիւնից յետոյ որևիցէ հետք կամ մնացորդ արդեօք չէ՞ մնացել, որոնք—եթէ ոչ այժմ, գոնէ յետոյ, կարող են նորից երևան գալ երեխայի աչքերում, երբ նա կսկսի ուսանիլ և կամ առաջին անգամ գործ դնել իւր աչքերը ոչ թէ աննշան և զուարճալի այլ կանոնաւոր աշխատութիւնների համար։

Ձեմ կարող չյիշել որ աչքերի (միացնող թաղանթի) բորբոքումը, ինչպէս յայտնի է շատ յաճախ է պատահում կոքսրաչի, ծաղկի, կոքսրեր տամոռ և առհասարակ մորթի, կոպերի և երեսի հիւանդութիւնների ժամանակ։ Աչքերի բորբոքումը երբեմն վերոյիշեալ հիւանդութիւնների ժամանակ այն աստիճանի կարող է զարգանալ, որ կարող է փոխարկւիլ համարեա այնպիսի շարաւային բորբոքման՝ որպիսի ունենում են նորածինները։ Այս դէպքում և այսպիսի շարաւային բորբոքման ժամանակ պէտք է գործ դնել բժշկութեան բոլոր այն միջոցները և եղանակները, որոնք առաջարկւած են նախընթաց երեսներում։

Իսկ եթէ բորբոքումը չէ հասնում այնքան բարձր աստիճանին և կայանում է միայն փոքր ինչ լորձիւնի և արտասուքի արտաթորման կամ լուսավախութեան մէջ, այն ժամանակ հարկաւոր է միայն բաւականանալ աչքերի և սենեակի օդի մաքրութեամբ (ինչպէս որ ցոյց է տրւած) և կաթիլների գործածութեամբ (տես երես 22). կաթիլները այն ժամանակ են միայն գործածւում, երբ միացնող թաղանթի կարմրութիւնը և լորձիւնի արտաթորման քանակութիւնը բաւական շատ է։

կողմը մաքուր է, հարկաւոր չէ գործ դնել ոչ մի օդամաքրիչ միջոց, մանաւանդ օդը կարելի չէ մաքրել։

Ով որ կարող է թող աչքացաւ ունեցող երեխային ցոյց տայ ամենալաւ խորհրդականին—բժշկին, իսկ անկարողը—թող նորա աչքերի մասին հոգս տանի այնպէս, ինչպէս ասւած է այս փոքրիկ գրքոյկումկամ իւր և կամ լաւ հմուտ մանկաբարձի օգնականութեամբ:

ՑԱՆԿ

	Էջէ՝.
Ներածութիւն: Աչքերի շարաւային բորբոքումից շատ երեխաներ են կուրանում, օրինակներ (երես 3). հիւանդութիւնը հարուստների եւ աղքատների մէջ:	1—4
Աչքերի միացնող թաղանթի համառօտ նկարագրութիւնը:	5—6
Միացնող թաղանթի շարաւային բորբոքման նկարագրութիւնը. շարաւ. (թարախ). նորա վարակիչ յատկութիւնը:	6—9
Հիւանդութեան պատճառները:	9—10
Հիւանդութեան սաստիկ վարակիչ յատկութիւնը. բժշկութեան անհրաժեշտութիւնը. բժշկութիւն հիւանդանոցներում եւ տանը.	10—14
Նախապաշտպանողական միջոցներ եւ բժշկութիւն:	» 14
Մօր բժշկելիը. երեխայի լւացումը. աչքերի մաքրումը. առողջ աչքը հիւանդ աչքից վարակվելուց պահպանելը. միջոցներ վարակման սկզբում. մաքրութիւն եւ յստակութիւն. սառը թրջուկներ (երես 18) եւ նոցա գործածելու եղանակը. շարաւը եւ լորձիւնը հեռացնելը եւ նոցա եղանակները (երես 19—21) դեղի կաթիլները. կապլիներ կաթեցնելը. (երես 21). ինչ պէտք է անել երբ վերոյիշեալ միջոցները գործածելուց յետոյ շարաւային բորբոքումը լաւնալու տեղ վատանում է եւ եթէ ոչ բժիշկ եւ ոչ փորձած մանկաբարձ է զտանւում:	23
Կոպերի շուռ տալը. պատրաստութիւններ. բորակաթթուային արծաթի խառնուրդով օծելը. ինչպէս երեխային բռնել. ինչ անել օծելուց յետոյ,	27
Աչքացաւ ունեցող երեխաների բնակարանների եւ նոցա մէջ եղած օդի մասին.	28
Վերջաբանութիւն	

Գրադարան ընթերցող
Հայ կանանց
Մասնաճիւղ

3374

2013

Г-41